ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2019/54, 25.07.2019թ.

Բողոք բերող անձ՝ «ԱԼԵՔՍ ՊՐՈ» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-19/20» գնանշման հարցում

Գնման առարկան՝ Անօդաչու թռչող սարքերի մասերի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ Չեղյալ համարել «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-19/20» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ.ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում,

իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

<<Ալեքս Պրո>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ), հասցեն՝ ՀՀ Ք. Երևան, Ռոստովյան 36/33, ՀՎՀՀ-ն՝00483033 հեռ. 095-988991, էլ. Փոստի հասցեն՝ alexprollc1@gmail.com

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ

ԲՈՂՈՔՆԵՐԸ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ

<<ԱԼԵՔՍ ՊՐՈ>> ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՏՆՕՐԵՆ ԼՈՒՍԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՑ

ՀՀ Ք. ԵՐԵՎԱՆ, ՌՈՍՏՈՎՅԱՆ 36/33

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ <<ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ>> ՊՈԱԿ

ՀՀ Ք. ԵՐԵՎԱՆ, ԹԱՒՐՈՎԻ 15

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ <<ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-19/20>>

Դիմում

Հարգելի գնումների հետ կապված բողոքները քննող անձ

<<Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն>> ՊՈԱԿ-ի (այսուտետ՝ պատվիրատու) 28 հունիսի 2019 թվականին gnumner.am կայքում ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-19/20 ծածկագրով հայտարարվել է գնանշման հարցման միջոցով ապրանքների գնման ընթացակարգ, գնման առարկա է հանդիսացել անօդաչու թռչող սարքերի մասերը, որը նույն կերպ արտացոլվել է ընթացակարգի հրավերի գնման և վճարման ժամանակացույցներում միավոր ապրանքի անվանման սունյակներում ապրանքի տեխնիկական բնութագիրը սունյակում բացվածքով որով պատվիրատուն ցանկանում է գնել մեկ հատ անօդաչու թռչող սարքի տեսախցիկ:

<<Ալոքս Պրո>> ՍՊ ընկերությունը օրենքով սահմանված կարգով հայտ է ներկայացրել ընթացակարգին լիազորված անձի միջոցով, հայտ է ներկայացրել միայն մեր կազմակերպությունը հայտի գինը կազմել է 637000 (Վեց հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամ, պատվիրատուի կողմից 2019 թվականի հուլիսի 1-ին հրապարակված գնումների պլանում որը պատվիրատուի վերջին փոփոխված գնումների պլանն էր ապրանքի գինը կազմել է 740000 (Յոթ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ այսինքն մեր կողմից ներկայացված գինը ըստ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ինմասի չի գերազանցել պատվիրատուի կողմից ապրանքի գնման համար նախատեսված ֆինանսական միջոցները, որի մասին և փաստել են նիստին ներկա երկու հանձնաժողովի անդամները և հանձնաժողովի քարտուղարը:

2019 թվականի հուլիսի 1-ին ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-19/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգիգնահատող հանձնաժողովի կողմից հրապարակվեց արձանագրություն ըստ որի ընթացակարգը չկայացած է հայտարարվում հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին հետի 1-ին մասը:

Հարկ է նշել, որ պատվիրատուի կողմից կոպիտ կերպով խաղտվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-դ կետը:

Հաշվի առնելով վերոգրյալը խնդրում եմ չեղյալ համարել ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-19/20 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

Կից ներկայացնում եմ՝

1. <<Ալեքս Պրո>> ՍՊ ընկերության տնօրենի նույնականացման քարտի պատճեն,
2. <<Ալեքս Պրո>> ՍՊ ընկերության կողմից ընթացակարգին ներկայացրած հայտի պատճեն,
3. Ընթացակարգի գրանցամատյանի պատճեն,
4. Պատվիրատուի կողմից հաստատված և հրապարակված գնումների պլանի պատճեն,
5. Գնահատող հանձնաժողովի արձանագրությունների պատճեն,
6. Բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթուղթը:

<<Ալեքս Պրո >> ՍՊԸ-ի տնօրեն Լ. Ալեքսանյան

23.հուլիսի 2019թ.